«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Խաղը ն/դ տարիքում, խաղի տեսակները

Կատարող՝*Նվարդ Դովլաթյան*

Ղեկավար՝*Կ. Գևորգյան*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Խաղային գործունեության հիմնական առանձնահատկությունները……4

1.2. Խաղի կարևորությունը երեխայի հոգեկան զարգացման և անհատականության ձևավորման գործում……5

ԳԼՈՒԽ 2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

2.1. Երեխաների դաստիարակության և ուսուցման մեջ կիրառվող խաղերի տեսակները……7

2.2. Արհեստական կավի օգտագործումը խաղային թերապիայի մեջ……11

2.3. Սյուժետադերային խաղերի առանձնահատկությունները ըստ՝ Դ.Բ.Էլկոնինի……12

ԳԼՈՒԽ 3. ՄՈՆՏԵՍՈՐԻԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Դիդակտիկ խաղերին բնորոշ առանձնահատկությունները……14

3.2. Ամենօրյա պրակտիկ կյանքի համար նախատեսված նյութերի օրինակներ ըստ՝ Մ. Մոնտեսորիի……17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խաղը՝ որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցն է: Խաղի դերն ու նշանակությունը դիտում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման կարևորագույն միջոց:

Թեմայի արդիականությունը: Խաղը ոչ միայն երեխային զարգացնում է համակողմանի, այլ նաև զարգացնում է երեխայի հոգեկան գործընթացները, ուստի մանկապարտեզներում, դպրոցներում, մանկական զարգացման կենտրոններում կիրառելի են բազմաբնույթ խաղեր, որոնց պատրաստումը և կիրառումը, դաստիարակների, մանկավարժների պատրաստվածությունն այս թեմայով հրատապ է և կարևոր, քանի որ այն նպաստում է անձի զարգացմանը, շփման հմտությունների ձևավորմանը, լարվածության թուլացմանը, սոցիալական դերերի յուրացմանը, երեխաների ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Աշխատանքի նպատակն է տեսական և գործնական գրականության միջոցով կազմել գործնական պարապմունքների համար նախատեսված խաղեր, վերլուծելով նրանց ազդեցությունը ն/դ տարիքի երեխաների անհատական զարգացման վրա:

Խաղային գործունեության մանկավարժական նշանակությունը երեխաների կյանքում կարևորել են՝ Ա. Կոմենսկին, Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը մանկավարժներ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը և այլն: Խ. Աբովյանը մանկավարժներին հորդորում էր «չզրկել երեխային անմեղ խաղերից»: Հ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի բնական օրգանական պահանջն է, նրա էությունը: Համաձայն Ֆրոյդի տեսության՝ խաղը մարդուն բնորոշ գործունեությունն է՝ պայմանավորված նրա հոգեկանի զարգացմամբ:

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Խաղային գործունեության հիմնական առանձնահատկությունները

- Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ ակտիվության և ինքնուրույնության, հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, արտաքին աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու:
- Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները, ձևավորվում են նորագոյացություններ, որոնք նախապատրաստում և ապահովում են երեխայի հոգեկանի զարգացման հաջորդ փուլը:
- Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ, պլանավորում, արդյունք, որոնք, ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձևեր:
- Խաղային գործունեությունը բնական գործունեություն է, ուր չկա ճնշում և հարկադրանք, առկա է երեխաների համար բնական միջավայր: Խաղի ընթացքում երեխաներն ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ:
- Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և կրեատիվ (ստեղծագործական) ընդունակությունների զարգացմանը: Խաղի ընթացքում երեխան փորձում է ինքնահաստատվել և բնականաբար ջանում է առավելագույնս դրսևորել իր բոլոր հակումներն ու կարողությունները: Խաղը նաև երեխայի ընդունակությունների և կարողությունների ախտորոշման արդյունավետ միջոց է:
- Խաղը աշխարճանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է, իմացական գործունեություն: Խաղային գործունեության ընթացքում ձեռբերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են և խաղի ընթացքում ձեռբերած գիտելիքները չափազանց կայուն են:
- Խաղային գործունեությունն իր բնույթով ուղղված է նախադպրոցականի հուզակամային ոլորտի զարգացմանը, հետևաբար և հիմնարար անձնային որակների ձևավորմանը [8]:

1.2. Խաղի կարևորությունը երեխայի հոգեկան զարգացման և անհատականության ձևավորման գործում

Յուրաքանչյուր երեխայի կյանքում խաղը չափազանց կարևոր նշանակություն ունի, այն մեծապես ազդում է երեխայի մոտիվացիոն-պահանջմունքային ոլորտի վրա, նպաստում է երեխայի կամային հատկանիշների ձևավորմանը, զարգացնում է մտավոր ոլորտը և այլն: Կարևոր է նաև այն, որ խաղի շնորհիվ երեխան յուրացնում է բարոյական նորմեր մի քանի առումներով.

- Խոսքային առումով՝ ինչ չի կարելի ասել, ինչ է կարելի
- Խաղային իրավիճակների հետ կապված՝ ինչ չի կարելի անել [3, էջ 6]:

Հարկ է նշել, որ խաղաթերապիան և խաղի նշանակությանը առհասարակ մեծ տեղ են տվել՝ Դ. Էլկոնինը, Լ. Վիգոտսկին և Ա. Լեոնտևը: Էլկոնինի կարծիքով խաղի հիմքում ընկած են մարդկային հարաբերությունները, ինչն արդեն իսկ խոսում է այն մասին, որ այն կարող է թերապևտիկ նշանակություն ունենալ [3, էջ 7]:

Խաղը մարդուն ուղեկցել է նրա պատմական զարգացման բոլոր փուլերում: Այն եղել է ոչ միայն որպես զվարճալի զբաղմունք, այլև կյանքի տարբեր հարաբերություններում գործելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորման միջոց: Խաղերի բազմազանությունը տարբեր բնույթի արգելքներ է ստեղծում նպատակին հասնելու՝ հաղթելու ճանապարհին: Այդ արգելքները հաղթահարելու ժամանակ, յուրաքանչյուր երեխա դրսևորում է ինքնատիպ վարք՝ ուժ, ճարպկություն, հնարամտություն, խելք, գիտելիքներ, կռահում և այլն: Հենց այդ արգելքների հաղթահարման գործընթացն էլ նպաստում է երեխաների ըմբռնողականության, ուշադրության, հիշողության, կամքի, դիտողունակության, մտածողության, երևակայության զարգացմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, այդ ուղղությամբ արժեքավոր ունակությունների ձևավորմանը [1]:

Հայտնի է, որ երեխայի զարգացման ցուցանիշներից մեկն ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունն է: Այն նպաստում է ապագայում առանց դժվարությունների ցանկացած իրավիճակներում կողմնորոշվելուն, ձեռքբերածը փոփոխվող պայմաններում կիրառելուն: Բացառիկ ազդեցություն է ունենում նաև այն միջավայրը, ուր գտնվում է երեխան, և ուր նա իրեն դրսևորում է որպես ազատ, ինքնուրույն անձ՝ համագործակցելով այդ միջավայրի հետ: Այսպիսի գործունեության ծավալման ամենաարդյունավետ միջոցը խաղն է: Խաղի ժամանակ երեխաների առջև

բացվում են անձի ստեղծագործական ընդունակությունները: Առանց դրանց չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում: Երեխայի հոգեկան աշխարհը լիարժեք է միայն այն ժամանակ, երբ նա ապրում է խաղերի, հեքիաթների, երաժշտության, երևակայության ու ստեղծագործական աշխարհում [1]:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվում են ինչպես ուղղորդված, այնպես էլ ստեղծագործական խաղերը: Ուղղորդված խաղերը առաջարկվում, կազմակերպվում և անցկացվում են մանկավարժի կողմից: Դրանք ունենում են հստակ կանոններ, պայմաններ ու պարագաներ: Ստեղծագործական խաղը չի ունենում խաղավար և կանոններ: Խաղի առաջին տեսակը լայնորեն կիրառվում է բազմազան պարապմունքների ժամանակ, իսկ երկրորդը՝ ազատ խաղի ժամերին, այդ թվում՝ բացօթյա [5, էջ 4]:

Սոցիալական տեսակետից խաղը զարգացնելու նպատակով կարելի է խթանել երեխաների՝ միմյանց հետ խաղալու, հարաբերվելու, համագործակցելու ունակությունների զարգացումը: Այս մոտեցումը արդյունավետորեն կիրառվում է սյուժետադերային խաղերի, խաղ-բեմականացումների ժամանակ: Երկրորդի դեպքում երեխաները ստանձնում են դերեր ու, բեմականացնելով այս կամ այն ատեղծագործությունը, համագործակցում, շփվում ու հարաբերվում են: Առաջինի ժամանակ երեխաներն ավելի ազատ են հորինելու և ստեղծագործելու տեսակետից: Նրանք վերարտադրում են շրջապատի անցուդարձը, դերերը և կրկին համագործակցում. տեղի են ունենում շփում և հաղորդակցում: Սոցիալական շփումը կարելի է զարգացնել նաև այլ միջոցներով, օրինակ՝ ապլիկացիայի ժամանակ, խորանարդիկներով խաղալիս, նկարելիս կարելի է առաջարկել, որ միմյանց օգնեն գույներն ընտրել, մատիտ սրել և այլն: Դրսում ավազով խաղալիս կարելի է առաջարկել, որ միասին պատրաստեն որևէ շինություն: Բառապաշարի հարստացմանը նպաստում են սեղանի դիդակտիկ խաղերը՝ նկարներով դոմինոներ, լոտոներ, զարգացնող և այլ խաղեր [5, էջ 6-7]:

ԳԼՈՒԽ 2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

2.1. Երեխաների դաստիարակության և ուսուցման մեջ կիրառվող խաղերի տեսակները

Խաղի տեսակները սոցիալական տեսակետից

- *0-2 տարեկան- միայնակ խաղ*
- *2-2,5 տարեկան- հետևող խաղ*
- *2,5-3 տարեկան- զուգահեռ խաղացող*
- *3-4 տարեկան- հարաբերվող խաղ*
- *4-6 տարեկան- համագործակցող խաղ*

0-2 տարեկան երեխան միայնակ է խաղում: 2-2,5 տարեկանում երեխան հետաքրքրվում է շրջապատում խաղացող երեխաների խաղով, հետևում է նրանց, բայց խաղին չի միանում: 2,5-3 տարեկան երեխան խաղում է հասակակիցների կողքին, բայց՝ ոչ նրանց հետ: 3-4 տարեկան երեխան խաղում է հասակակիցների հետ՝ հարաբերվելով ու դերեր ստանձնելով: Այս տարիքում երեխան սկսում է ունենալ նախընտրելի խաղընկեր: 4-6 տարեկանում երեխան խաղում է՝ համագործակցելով ու դրսևորելով փոխօգնություն: Սա առավել ցայտուն է արտահայտվում ստեղծագործական խաղերի ժամանակ, օրինակ՝ ավազով խաղալիս [5, էջ 5]:

Տարիքային նորմերը իմանալը օգնում է մանկավարժին՝ երեխայի խաղը դիտարկելիս ենթադրություններ անելու նրա սոցիալական զարգացման վերաբերյալ: Օրինակ՝ եթե 5 տարեկան երեխան հասակակիցների կողքին է խաղում, ոչ թե նրանց հետ, խաղի ընթացքում չի դրսևորում համագործակցություն, ապա ամենայն հավանականությամբ, նա իր սոցիալական զարգացմամբ ու հաղորդակցմամբ համապատասխանում է 2,5-3 տարեկանին: Սա ազդակ է մանկավարժի համար՝ զրուցելու ծնողների հետ ու դիմելու մասնագետների խորհրդատվությանը [5, էջ 5-6]:

Խորհրդային մանկավարժության ներկայացուցիչները դասակարգում են խաղի խմբերն ըստ բնույթի, բաժանելով դրանք երկու խմբի՝ **ստեղծագործական** և **կանոնով: Ստեղծագործական խաղերը** բնորոշվում են ստեղծագործական բնույթով և ներքին «թաքնված» կանոններով: **Կանոնով խաղերի** բովանդակությունը նախապես մշակվում է և սահմանափակվում մեծահասակների կողմից հստակ կանոններով: Բնույթով դրանք ուսուցանող և զարգացնող են [8]:

Ստեղծագործական խաղերի բովանդակությունը կառուցվում է խաղացող երեխաների կողմից, այն ստեղծագործական բնույթի է: Ստեղծագործական խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումները արտաքին աշխարհի հանդեպ, ինքնուրույնության և ակտիվության մղումները, դրսևորվում են «ազատության աստիճանները», ցանկությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները: Խաղի այուժեն ընտրվում է խաղացող երեխաների կողմից և դրա հիման վրա կառուցվում է խաղի բովանդակությունը: Երեխաների խաղային մտահղացումն իրականացվում է դերային փոխակերպման եղանակով: Ստեղծագործական խաղերը նպաստում են սոցիալական դերերի յուրացմանը, սոցիալական փորձի ձեռքբերմանը և սոցիալական հարաբերությունների հաստատմանը: Ինքնուրույն եղանակով յուրացված սոցիալական փորձը վստահություն է ներշնչում աշխարհի և սեփական «ես»-ի հանդեպ և օգնում երեխային ինքնահաստատվելու հասակակիցների միջավայրում [8, 4 էջ 463-468]:

Խաղերի երկրոդ խումբն են կազմում **կանոնով խաղերը,** որոնք հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից երեխաներին ուսուցանելու, դաստիարակելու և զարգացնելու նպատակով: Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը, շարժողական խաղերը և տարբեր բնույթի զարգացնող խաղեր: Կանոնով խաղերը մշակվել են ժողովրդական խաղերի հիման վրա, դրանք ունեն հստակ մանկավարժական ուղղվածություն: Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում և պատրաստի ձևով ներկայացվում է երեխաներին: Խաղի բովանդակությունը միտումնավոր սահմանափակվում է կանոններով, որոնք կարգավորում և նպատակաուղղում են երեխաների խաղային գործողությունները: Կանոնով խաղերի բացառիկ նշանակությունը նախադպրոցականի ներդաշնակ զարգացման գործում առանձնահատուկ կարևորվել է Դ.Բ.Էլկոնինի կողմից: Կանոնով խաղերը ուսուցանում են և դաստիարակում, կրթում են և զարգացնում, նպաստում են ինքնագնահատմանը և փոխգնահատմանը [8, 4 էջ 463-468]:

Վերջին տարիներին խաղերի դասակարգման հետաքրքիր տարբերակ է առաջարկել ռուս մանկավարժ Ս.Լ.Նովոսյոլովան, որի հիմքում ընկած է խաղային գործունեության նախաձեռնությունը: Հեղինակն առանձնացնում է խաղերի երեք խումբ.

- ✓ Խաղեր, որոնց նախաձեռնողը երեխաներն են, դրանք ինքնուրույն և ստեղծագործական բնույթի խաղեր են: Օրինակ, սյուժետադերային խաղերը, խաղթատերացումները, խաղ-փորձարկումները,
- ✓ Խաղեր, որոնց նախաձեռնողը մեծահասակներն են, դրանք ունեն ընդգծված մանկավարժական ուղղվածություն: Օրինակ, ուսուցանող և ինտելեկտուալ խաղերը, շարժախաղերը, խաղ-զվարճանքները,
- ✓ Ժողովրդական խաղեր, որոնք ավանդաբար փոխանցվում են սերնդեսերունդ [8]:

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունն ընդունելի է համարում Ս.Ա.Կոզլովայի, Տ.Ա.Կուլիկովայի կողմից առաջարկված խաղերի դասակարգման եղանակը, որի հիմքում ընկած է խորհրդային մանկավարժության մոտեցումը: Խաղային գործունեությունն իր բնույթով լինում է ստեղծագործական և նպատակաուղղված զարգացնող կամ կանոնով: Առաջին խմբին դասվում են

- ✓ Սյուժետա-դերային խաղերը,
- ✓ Խաղ-թատերացումները,
- ✓ Կառուցողական խաղերը,
- ✓ Ռեժիսորական խաղերը և խաղ-երևակայությունները [8]:

Ռեժիսորական խաղը ստեղծագործական բնույթի, ինքնուրույն խաղ է, որը շատ նման է սյուժետա-դերային խաղին: Ի տարբերություն սյուժետա-դերային խաղի, ռեժիսորական խաղն անհատական գործունեություն է և ունի ընդամենը մեկ դերակատար: Ռեժիսորական խաղը միանձնյա խաղ է, քանի որ մյուս «մասնակիցները» անշունչ առարկաներ են՝ խաղալիքներ, տարբեր իրեր, փոխարինող առարկաներ: Այն հնարավորություն է տալիս խաղացող երեխային միանձնյա ղեկավարելու, որոշելու բոլորի փոխարեն և գործելու սեփական նախասիրություններից, հետաքրքրություններից և կարողություններից ելնելով [8]:

Խաղ-թատերացումների միջոցով երեխան փորձում է վերարտադրել իր երազած աշխարհը, աշխարհի այն կատարյալ պատկերը, որին նա ներքուստ ձգտում է, նմանվելով հեքիաթային հերոսներին և առասպելական կերպարներին: Խաղ-թատերացումներում երեխայի կողմից օգտագործվում են բոլոր արտահայտչական միջոցները՝ կերպարային կեցվածքը, արտահայտիչ խոսքն իր բոլոր նրբերանգներով, դիմախաղը, շարժումները,

բեմական հագուստը: Խաղ-թատերացումների հիմքում ընկած է մանկական գեղարվեստական ստեղծագործությունների բովանդակությունը, բազմադարյա հարուստ փորձը՝ ներկայացված հերոսական կերպարներով և լավատեսական վերլուծությամբ ու վերջաբանով: Գեղարվեստական գրականության լավագույն տարբերակը հեքիաթն է, որի բովանդակությունը երեխաները գերագույն հաճույքով են ներկայացնում խաղ-թատերացումներում [8]:

Այսօր, նախադպրոցական հաստատություններում, ցավոք, գերակշռում են խաղ-բեմականացումները, որոնց ընթացքում երեխաներն արտացոլում են այն հերոսներին, որոնք ընկալվում են նրանց կողմից աուդիո-վիզուալ ճանապարհով՝ հեռուստատեսության, ռադիոյի կամ տեսաֆիլմերի միջոցով: Այս դեպքում երեխաներն, ընդամենը, վերարտադրում են իրենց տեսածն ու լսածը: Խաղ-թատերացումները ենթադրում են վերլուծական աշխատանք հեքիաթի պարտադիր ընթերցանության և հաջորդիվ քննարկումների և գնահատումների արդյունքում: Խաղ-թատերացումների և սյուժետադերային խաղերի միջև կան ընդհանուր գծեր, հետևաբար դրանք կարող են հաջորդել միմյանց: Օրինակ, «Կարմիր գլխարկ» խաղթատերացումը ցանկություն կարող է առաջացնել ծավալելու «Թատրոն» սյուժետադերային խաղը [8]:

Շինարարա-կառուցողական խաղերին բնորոշ առանձնահատկություններն են.

- Շինարարա-կառուցողական խաղերի բովանդակությունը պայմանավորված է կառուցելու, ստեղծելու ցանկությամբ,
- Շինարարա-կառուցողական խաղերն իրենց բնույթով ինքնուրույն են և նպատակաուղղված, խաղի դրդապատճառը արդյունքն է: Երեխան սկսում է կառուցել, հստակ պատկերացնելով, թե ինչ՞ է ուզում կառուցել և ինչպիսին պիտի լինի այդ կառույցը:
- Շինարարա-կառուցողական խաղերի ստեղծագործական բնույթը բխում է կառուցելու ընթացքում հորինելու և երևակայելու լայն հնարավորություններից:
- Շինարարա-կառուցողական խաղերի կարևորագույն բաղադրամասը շինանյութն է, որի բազմազանությամբ է պայմանավորված խաղի մտահղացումն ու ընթացքի արդյունավետությունը: Նախադպրոցական տարիքում օգտագործվող շինանյութը պայմանական բաժանվում է երեք տեսակի՝ **բնական** (ջուր, ձյուն, սառույց, ավազ, հող, քար, փայտ և այլ), **օժանդակ** (տուփեր, պարկեր, աթոռներ, սեղան, ստվարաթուղթ և այլ) և **հատուկ** ստեղծված ու արտադրված երեխաների համար (խաղալիք-շինանյութ, կոնստրուկտորներ, խճանկարներ, փազլներ և այլ) [8]:

2.2. Արհեստական կավի օգտագործումը խաղային թերապիայի մեջ

Марта Янг (Martha D. Young)

Խաղային թերապիայում արհեստական կավի օգտագործումը մեծ ներուժ ունի: Այս նյութը շատ պլաստիկ է, չի կարծրացնում, չի քանդվում և ունի յուղային հիմք, ինչը հեշտացնում է այն հեռացնել փայտե մակերևույթներից՝ օգտագործելով սովորական մաքրման լուծումներ: Երեքից տասնմեկ տարեկան հասակ ունեցող երեխաները տարբեր պատճառներով հաճույք են ստանում աշխատել այս նյութի հետ: Նախ և առաջ հաճելի է շփումը: Երկրորդ, դրանից ցանկացած բան կարելի է ձևավորել, և ստեղծված ձևերը կարելի է հեշտությամբ փոխել կամ մանրացնել, եթե երեխան դա ցանկանա: Այս նյութի հետ գործ ունենալիս երեխաները, որոնցից շատերը հատկապես ոգևորությամբ են աշխատում, կարող են արտահայտել իրենց զգացմունքները: Ստեղծված գործերի քննարկումը, որպես կանոն, երեխայի մեջ բացասական ռեակցիաներ չի առաջացնում: Արհեստական կավով աշխատելը շատ պարզ է, բայց արդյունավետ:

Տեխնիկայի նկարագրություն՝ Ամեն անգամ երեխային առաջարկվում է ընտրել ցանկացած մեկ գույնի կավ՝ գունային խառնուրդը կանխելու համար: Նրան ներկայացվում են փոքր շարժակազմի քորոց և գրենական պիտույք՝ դանակ: Որոշ այցելուներ խնդրում են տալ խոհարարական կաղապարներ, բայց ցանկալի չէ անել, որպեսզի խրախուսենք նրանց ինքնուրույնությունը: Երբեմն երեխաները, կավ օգտագործելով, ընդօրինակում են որոշակի կերակուրներ, իսկ հետո պատկերում են ճաշը կամ թեյը, մյուսները, պարզապես զանազան մանիպուլյացիաներ են կատարում նյութի հետ:

Լուծումներ առաջարկություններ օգտագործման համար՝ Տարբեր խնդիրներ ունեցող երեխաներ բավականին լավ են օգտագործում այս նյութը: Օրինակ՝ կարելի է դա օգտագործել հիպերակտիվ երեխաների հետ աշխատանքում, վարքագծային շեղումներով և դեպրեսիաներով երեխաների հետ: Հոգեբանները այս նյութը, իրենց պրակտիկայում օգտագործել են ութամյա շատ արագաշարժ տղայի հետ, որը հակված էր բուռն բողոքների, արձագանքների դպրոցում և տանը: Նա գլորեց կավե երկու գնդիկ, որոնցից պատրաստեց մարդկային կերպարներ: Նրանց տարբեր ձեռքերով պահելով՝ նա ընդօրինակեց նրանց միջև մահացու պայքար: Մի քանի «կռիվների» ժամանակ, փոքրիկ մարդը նիզակով խոցեց ևս մեկին: Տղան խաղից մեծ հաճույք ստացավ և մեկնաբանեց կերպարների գործողությունները: Դասի վերջում նա շատ ավելի հանգիստ էր, քան սկզբում [9, էջ 157-158]:

2.3. Սյուժետադերային խաղերի առանձնահատկությունները ըստ՝ Դ.Բ.Էլկոնինի

Սյուժետադերային խաղերը այն խաղերն են, որոնց ընթացքում լավագույնս մանկավարժական արժեքը դրսևորվում են նախադպրոցականի ազատության և ինքնուրույնության ձգտումները, ստեղծագործելու ցանկությունն ու կարողությունները, ուր կան լայն հնարավորություններ արտացոլելու սեփական տպավորություններն ու պատկերացումները, կարծիքն ու վերաբերմունքը: Սյուժետադերային խաղերն իրենց բնույթով ստեղծագարծական են: Երեխան սյուժետադերային խաղերում արտացոլում է ոչ միայն առանձին տպավորություններ կամ պատկերացումներ, այլև տարբեր իրադրություններ, անձնական փորձից փոքրիկ դրվագներ կամ հասարակական երևույթներ [8]:

Սյուժետադերային խաղի նպատակն ու արդյունքը երևակայական են, սակայն երեխայի կողմից ընկալվում են ամենայն լրջությամբ և պահանջում նրանից բավական ջանքեր: Խաղի նպատակին հասնելու համար նախադպրոցականը փորձում է լուծել բարդ՝ իրական կյանքում անլուծելի խնդիրներ, ինչը հնարավոր է երևակայական իրավիճակի և երևակայական կերպարների ստեղծման միջոցով: Խաղի ընթացքում նա փորձում է հորինել և ստեղծագործել: Խաղային մտահղացման ազատ և ինքնուրույն դրսևորման համար երեխայից պահանջվում է հիշողության, խոսքի, մտածողության և երևակայության լարված և ակտիվ աշխատանք: Սյուժետադերային խաղերն իրենց բնույթով հուզական են, հագեցած են դրական հույզերով և լիցքերով [8]:

Սյուժետադերային խաղերի առանձնահատկությունները մանրամասն ուսումնասիրվել են Դ.Բ.Էլկոնինի, Ռ.Ի.Ժուկովսկայայի, Ա.Պ.Ուսովայի կողմից, որոնք իրենց հետազոտությունների արդյունքում առանձնացնում են սյուժետադերային խաղերի հիմնական կառուցվածքային տարրերը և առաջարկում խաղի բաղադրատարրերի ձևավորման մանկավարժական համապատասխան պայմաններ: Ն.Ա.Կորոտկովան և Ն.Յ.Միխայլենկոն հատուկ կարևորում են սյուժետադերային խաղերի ղեկավարման ժամանակակից մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը: Եթե սյուժետադերային խաղերի ավանդական ղեկավարման պայմաններում հիմնական շեշտը դրվում է խաղերի բովանդակության հարստացման վրա, ապա ժամանակակից եղանակները ընդգծում են խաղի ընթացքում սյուժեի ուղղվածության փոփոխման դերը այն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով: Աննշան միջամտությունը մանկավարժի կողմից կարող է բոլորովին փոխել խաղի ընթացքը և կրկնակի հետաքրքրություն առաջացնել խաղը նորովի կառուցելու հանդեպ [8]:

Ըստ Դ.Բ.Էլկոնինի սյուժետադերային խաղերի բովանդակությունը մեծահասակների կենցաղային, հասարակական կամ աշխատանքային գործունեության և հարաբերությունների այն էական կողմերն են, որոնք երեխաների տեսանկյունից բնորոշում են նշված գործունեության տեսակները, ընկալվում են որպես գլխավոր գերակայող կողմեր.

- Կրտսեր նախադպրոցականի սյուժետադերային խաղերի առանձնահատկությունները պայմանավորված են նրա հոգեկանի զարգացման աստիճանով և սոցիալական փորձի աղքատությամբ, սակավությամբ:
- Միջին նախադպրոցական տարիքում ընդլայնվում են երեխաների պատկերացումները մեծահասակի կյանքի և գործունեության մասին, զգալի հարստանում է սոցիալական փորձը, զարգանում են հոգեկան գործընթացները, արդյունքում՝ սյուժետադերային խաղերում պատկերվում են փոխկապված իրադարձություններ և կառուցվում է ամբողջական սյուժե:
- Ավագ նախադպրոցական տարիքում երեխաների կողմից պլանավորվում և համատեղ քննարկվում է խաղի բովանդակությունը, այն կառուցվում է նախապես ընտրված սյուժեի հիման վրա: Սյուժեն ձեռք է բերում հասարակական ուղղվածություն, այսինքն, երեխաներին սկսում են առավել հետաքրքրել մարդկային հարաբերությունները, կյանքում հանդիպող տարբեր իրադրություններում դրսևորվող հասարակական փոխհարաբերությունները: Սյուժեն կառուցվում է ընդհանրացված խաղային իրավիճակի խաղարկման միջոցով, որն ենթադրում է պայմանական և սիմվոլիկ գործողությունների կիրառում: Խաղի բովանդակության ծավալման ընթացքում հաճախ պահանջվում են դերային փոխակերպումներ, սյուժեի ուղղվածության փոփոխություններ և կազմակերպչական այլ հարցերի որոշումներ, որոնք բարձրաձայն քննարկվում և մեկնաբանվում են [8]:

Սյուժետադերային խաղերի հոգեբանամանկավարժական իմաստը բազմազան սոցիալական դերերի յուրացումն է ու սոցիալական հմտությունների ձեռքբերումը: Դերը երեխայի սոցիալական դիրքորոշման դրսևորումն է խաղային իրողության մեջ: Դերերի միջոցով երեխաները նույնացվում են իրենց սյուժեի կերպարներին և փորձում արտացոլել կերպարին բնորոշ գործառույթները և հարաբերությունները [8]:

ԳԼՈՒԽ 3. ՄՈՆՏԵՍՈՐԻԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Դիդակտիկ խաղերին բնորոշ առանձնահատկությունները

Նախադպրոցական մանկավարժության զարգացման ընթացքում հատուկ ուշադրության են արժանացել Ֆ.Ֆրյոբելի, Մ.Մոնտեսորիի և Ե.Տիխեևայի դիդակտիկ խաղերի համակարգերը, որոնք արժանացել են համաշխարհային գնահատման և կիրառելի են առ այսօր.

- **Ֆ.Ֆրյոբելի** դիդակտիկ խաղերի համակարգի առավելությունը նրանում է, որ դիդակտիկ խաղերը ենթադրում են վեց տեսակի երկրաչափական ձևերի կիրառում և ուղեկցվում են երաժշտությամբ, երգերով ու ոտանավորներով:
- **Մ.Մոնտեսորիի** դիդակտիկ խաղերի համակարգը տարբերվում է խիստ նպատակաուղղված և կազմակերպված բնույթով: Ըստ Մ.Մոնտեսորիի, այն խաղը, որն ուսուցանող չէ՝ «դատարկ խաղ է»: Մ.Մոնտեսորիի դիդակտիկ խաղ-պարապմունքները նպատակաուղղված զարգացնում են նախադպրոցականների զգայական գործառույթները և մտածողությունը, նպաստում ինքնազարգացմանը և ինքնուրույնությանը աշխարհճանաչման գործընթացում:
- Հետաքրքիր է նաև **Ե.Ի.Տիխեևայի** դիդակտիկ խաղերի համակարգը՝ կառուցված երեխաների հետաքրքրությունների, իմացական ակտիվության և ինքնուրույնության հիման վրա: Դիդակտիկ խաղերի բովանդակությունը կառուցվում է ոչ միայն դիդակտիկ պարագաների շուրջ, այլև բնության և հասարակության, հարուստ մանկավարժական փորձի լայն օգտագործմամբ [8]:

Դիդակտիկ խաղերին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- Դիդակտիկ խաղերն ունեն ուսուցանող հստակ նպատակ և խնդիրներ,
- Դիդակտիկ խաղերը զարգացնող և դաստիարակող բնույթի են, ուսուցման խնդիրների հետ միատեղ լուծվում են երեխայի դաստիարակության և զարգացման խնդիրները,
- Դիդակտիկ խաղերը նպատակաուղղված և կազմակերպված բնույթի են, ինչը հնարավորություն է տալիս պլանավորելու խաղային ուսուցման գործընթացը,
- Խաղային ուսուցման արդյունքները ենթակա են գնահատման և վերահսկման,

- Դիդակտիկ խաղերը նախադպրոցականի համար աշխարհճանաչման միջոց են [8]:

Դիդակտիկ խաղերի հիմնական առավելությունը նրանում է, որ դրանք հնարավորություն են տալիս երեխաներին ուսուցանվելու իրենց համար հետաքրքիր և ակտիվ գործունեության միջոցով: Երեխաներին դիդակտիկ խաղերի ընթացքում գրավում են ոչ այնքան խաղերի դիդակտիկ խնդիրները, որքան խաղին ակտիվ մասնակցելու, հասակակիցների հետ շփվելու, մրցելու և հաղթելու ցանկությունը: Դիդակտիկ խաղի ընթացքում ձեռքբերած գիտելիքներն ու կարողությունները կայուն են: Դիդակտիկ խաղերը դրդում են երեխաներին ինքնաուսուցման և նպաստում երեխաների ինքնուրույնության հաստատմանը և ինքնակազմակերպ- մանը: Դիդակտիկ խաղի յուրահատկությունները հիմք են տալիս մտածելու, որ դա նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման կազմակերպման լավագույն ձևն է, նրանց դաստիարակության և զարգացման արդյունավետ միջոցը [8]:

Կյանքի առաջին տարիներին երեխան ունենում է շարժման բնական ձգտում: Նա ցանկանում է տակնուվրա անել իր շուրջ ամեն բան, որպեսզի ավելի լավ ծանոթանա իրեն շրջապատող առարկաների հետ և կարողանա իմաստավորված կերպով օգտագործել այդ ամենը: Նա գտնվում է շարժումների զարգացման սենզիտիվ՝ զգայուն փուլում: Սկզբում շարժումներն անփույթ են, հաճախ աննպատակ և աններդաշնակ: Այդ իսկ պատճառով դաստիարակության գործընթացին անհրաժեշտ է կցել մոտոր ակտիվությանը նպաստող վարժանքներ: Առաջին գործողությունները, որոնք երեխան կյուրացնի, կդառնան վերահսկելի՝ նպատակաուղղված վարժությունների կատարման արդյունքում: Շարժողական համակարգի զարգացումը կախված է երեխայի շարժումների անհատական տեմպից: Հստակ շարժումների ձևավորման համար անհրաժեշտ է ստեղծել նախապատրաստական միջավայր՝ հաշվի առնելով երեխայի շարժողական պահանջմունքները: Սարքավորումները, նյութերը, որոնք կկիրառավեն, իրենց մեծությամբ և հարմարավետությամբ պետք է համապատասխանեն երեխայի կարողություններին և տարիքին: Նման միջավայրում երեխային հարկավոր է առաջարել տարաբնույթ վարժություններ, որոնք կնպաստեն երեխայի շարժումների կատարելագործմանն ու դրանք կոորդինացնելու կարողության զարգացմանը: Վարժությունների համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի առարկաներ, որ երեխան հստակ հասկանա իր գործունեության նպատակը [11]:

Որոշ խմբային վարժություններ, ինչպես, օրինակ, զրույցները և դերային խաղերը, նպաստում են երեխայի կողմից սոցիալական վարքի ձևերի յուրացմանը, որի մեջ մտնում

են՝ ողջույնի, օգնություն ցուցաբերելու, հարգանք ցուցաբերելու, կոնֆլիկտները հարթելու կարողությունները և այլն: Մոնտեսսորին ընտրել է պրակտիկ վարժություններ կյանքից: Երեխայի գործունեությանը հետևում են մեծահասակները: Հետագայում նրա մոտ ձևավորվում է արժանապատվության և ինքնուրույնության զգացում, քանի որ այժմ կյանքի համար կարևոր գործունեության ձևերը կարողանում է կիրառել ինքնուրույն: Անկախության հետ մեկտեղ զարգանում է ինքնավստահությունը: Ամենօրյա պրակտիկ կյանքի համար նախատեսված նյութերը պետք է իրենց չափսերով, գույնով և հարմարավետությամբ համապատասխանեն երեխայի պահանջմունքներին և հնարավորություններին: Երեխաները հատկապես շատ են սիրում այն վարժությունները, որոնք հանդիպում են նաև իրենց տանը: Երեխայի համար նման գործունեությունը ինքնանպատակ է դառնում՝ նա սկսում է մաքրել, քանի որ ցանկանում է՝ չանկնալելով որևէ ուղիղ արդյունք: Ավելի մեծ տարիքի երեխայի համար արդեն կարող է կարևորվել արդյունքը, քանի որ նա ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ իր շուրջը կարգուկանոն լինի: Արդյունքը լինում է այն, որ երեխան սկսում է վերահսկել իր վարքը և կենտրոնացվածությունը, նույնիսկ ավելի լավ, քան շատ մեծահասակներ: Նրա շարժումները դառնում են ավելի հարմոնիկ: Պետք է սովորենք անցկացնել պարապմունքները և վարժությունները դանդաղ, մանրամասն վերլուծեք դրանք այնպես, որպեսզի ձևավորված կառույցը հասկանալի լինի երեխայի համար: Երեխաները կսովորեն, օրինակ, հանվել և հագնվել: Դա բարդ գործընթաց է և դրա իրականացումը հեշտ չէ: Հենց այդ է պատճառը, որ հանվելու և հագնվելու համար երեխային ժամանակ է անհրաժեշտ, այնքան ժամանակ, որպեսզի նա կարողանա դա անել: Որքան անկախ լինի երեխան մեծահասակի օգնությունից, այնքան ավելի շատ ստեղծագործական ուժ կունենա հասարակության մեջ սեփական վարքը կառուցելու համար: Ընդհանուր առմամբ պրակտիկ կյանքի վարժություններն ընդհանրացնելով՝ կարելի է ասել հետևյալը՝

- Դրանք օգնում են երեխային գիտակից գործողություններ կատարել
- Կատարելագործում և ուղղորդում են վարքը
- Նպաստում են երեխայի՝ ծնողից կախվածության մակարդակի իջեցմանը, ինքնուրույնության մակարդակի բարձրացմանը՝ նպաստելով սեփական արժանապատվության և ինքնագնահատականի բարձրացմանը:
- Զարգացնում է պատասխանատվության զգացում
- Միաժամանակ ձևավորում են նաև ներքին հոգևոր կառույցները [11]:

3.2. Ամենօրյա պրակտիկ կյանքի համար նախատեսված նյութերի օրինակներ ըստ՝ Մ. Մոնտեսորիի

- ***Ջուրը լցնում ենք մի տարայից մյուսի մեջ***

Նյութեր- Սկուտեղ, թափանցիկ որևէ տարա, որի վրա գծեր կլինեն՝ ջրի քանակությունը որոշելու համար և այլ տարա, որի մեջ կկարողանանք դատարկել ջուրը, նաև կտոր:

Նպատակը- Շարժումների կոորդինացիայի զարգացում, արտաքին միջավայրում կողմնորոշվելու կարողության զարգացում:

Տարիք- Մոտ երեք տարեկան:

Ինչպես աշխատել նյութի հետ- Ջուրը լցված է տարայի մեջ, որևէ կոնկրետ չափաքանակով: Ջրով լի տարան և դատարկ տարան իրար կողք են դրված: Շատ կարևոր է, որ ամեն բան իր տեղում լինի երեխայի շուրջ: Ուսուցիչը վերցնում է տարան և դատարկում ջուրը մեկից մյուսի մեջ շատ դանդաղ՝ մինչ մյուս տարան կլցվի, այնուհետև դանդաղ դնում է տարան իր տեղը և կտորով մաքրում թափված ջրի կաթիլները: Այնուհետև նորից դատարկում ջուրը նախկին տարայի մեջ:

Կարևոր է, որ ուսուցիչը վարժությունը դանդաղ կատարի: Այնուհետև ուսուցիչն առաջարկում է, որ երեխան ինքն ինքնուրույն կատարի վարժությունը [11]:

- ***Կոճակներով շրջանակներ***

Նյութեր- փայտե շրջանակներ տարբեր կապիչներով՝ կոճակներ՝ փոքր, մեծ, թելեր, ժապավեններ, ամրակներ:

Ժապավենով կատարելու դեպքում երեխային սովորեցնում ենք կապ գցել երկու ժապավենները: Սկզբում մանկավարժն ինքն է կատարում գործողությունները, այնուհետև առաջարկում երեխային անել: Նույնը կատարում ենք նաև կոճակների դեպքում: Կարևոր է, որ հմտությունը ձևավորելուց հետո, երեխային առաջարկենք փորձել սովորածը ընկերոջ և իր սեփական հագուստի վրա [11]:

- ***Դիդակտիկ խաղի կիրառվող օրինակներ***



Նկար 1

նկար 2

նկար 3

Նկար 4

նկար 5

Իրականացվել է ավագ խմբում, սկզբում դաստիարակի օգնությամբ, այնուհետև ինքնուրույն, ձևավորելով սաների մոտ համապատասխան հմտություն: Խաղը զարգացնում է նուրբ շարժումների մոտորիկան, տրամաբանությունը, ուշադրությունը, հիշողությունը՝ քանի որ այն պահանջում է նաև գործողության կրկնություն: Սաները մեծ հաճույքով մասնակցեցին խաղին, դրսևորեցին հետաքրքրություն և ձեռք բերեցին փորձ տարբեր իրավիճակներում, հետագա գործուղություններին ավելի հեշտ մասնակից դառնալու համար:

Հետևաբար.

- Կարևոր է խրախուսենք երեխայի հասակակիցների հետ խաղերը, համակարգչային խաղերի փոխարեն,
- Երեխայի համար ապահովել խաղային միջավայր և շփման, հաղորդակցման նպաստավոր պայմաններ
- Ուշադրություն դարձնել, որ խաղը համապատասխանի երեխայի տարիքային նորմին
- Խրախուսել երեխայի ազատ ստեղծագործելու, ինքնարտահայտվելու ունակությունը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նախադպրոցականի խաղային գործունեության միջոցով իրականացվում են հետևյալ հիմնական խնդիրները.

- ✓ Նպաստում է յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը:
- ✓ Որպես իմացական գործունեություն՝ նպաստում է աշխարհաճանաչմանը,
- ✓ Խաղի ընթացքում դրսևորվում են երեխայի հակումներն ու հետարքրքրությունները:
- ✓ Զարգանում են հոգեկան գործընթացները,
- ✓ Ստեղծվում են ինքնաարտահայտվելու հնարավորություններ,
- ✓ Զարգանում են բարոյակամային որակների և հուզազգացմունքային ոլորտը:
- ✓ Խաղային գործունեությունը հարստացնում է երեխաներին ընդհանրապես նոր տպավորություններով, գիտելիքներով, հմտություններով,
- ✓ Ձևավորում է երկխոսական, հուզականորեն հարուստ խոսք, ակտիվացնում բառապաշարը,
- ✓ Նպաստում է յուրաքանչյուր երեխայի բարոյական և գեղագիտական դաստիարակությանը:

Հետևաբար, ուսուցումը կազմակերպելիս պետք է հաճախ ստեղծել խաղային իրավիճակներ և հնարավորություն տալ երեխային՝ մտնելու իրենց համար հիմնական և կարևոր համարվող գործունեության ոլորտ: Չէ՞ որ խաղն առավել գրավիչ է դարձնում ուսուցումը, կենտրոնացնում երեխայի ուշադրությունը, խթանում մտածողությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք:/.-Եր.: «Զանգակ-97», 2009.-80 էջ:
2. Խուդոյան Ա., Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց: Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար.- Եր.: ՎԵԼԱՍ Պրինտ ՍՊԸ., 2018.- 188 էջ:
3. Խուդոյան Ա., Խաղաթերապիա: Հոգեբանական խաղեր երեխաների և դեռահասների համար: Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար.- Եր.: ՎԵԼԱՍ Պրինտ ՍՊԸ., 2021.- 188 էջ:
4. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ: Գիրք երկրորդ/ Ա Նալչաջյան.- Երկրորդ, բարեփոխված հրատարակություն. -Եր.: Բուկինիստ, 2016, 544 էջ:
5. Բարդ իրավիճակների պարզ լուծումներ/Ա. Ավագյան, Լ. Բաբայան, Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան, Ա. Մանուկյան, Մ. Մարության, Ս. Պետրոսյան.- Եր.: ՏՊԱՐԱՆ.ԷՅԵՄ, 2020.-132 էջ:
6. Խաղանք և սովորենք / Հեղինակներ՝ Սոֆիա Հովսեփյան, Լուսինե Աբրահամյան, Մարուսյա Բազինյան, Նաիրա Միսիթարյան, Էմիլիա Սարգսյան, Հեղինե Ռևազյան, Նաիրա Ավետիսյան / կազմ.հրատ. նախապատրաստեց՝ Ս. Հովսեփյանը.- Եր.: Արմավ, 2016.-120 էջ:
7. Հոգեբանական խաղեր և վարժություններ: Ձեռնարկ դաստիարակների, մանկավարժների և հոգեբանների համար / Կազմ.՝ Թ. Հարությունյան, Հ. Կարապետյան, Ա. Ենգիբարյան, Մասնագիտական խմբագիր՝ Ռ. Ստեփանյան.- Եր.: Ասողիկ, 2014.-144 էջ:
8. Նախադպրոցական մանկավարժություն. Է.Ա.Ալեքսանդրյանի խմբագրությամբ. - Երևան, 1992
9. Кэдьюсон Х., Шефер Ч. Практикум по игровой психотерапии. — СПб.: Питер, 2001. — 416 с: ил. — (Серия «Практикум по психологии»).
10. http://anikhudoyan.ucoz.net/publ/hogebanakan_tester_erexaneri_hamar/7-2
11. https://www.koob.ru/motessori_maria/montessori_material